ՈՒԵԼԻՔՈՒԽԻ ԵՐԿՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԸ

Գ. Հ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Սևանի ավազանի բազմահարուստ հնագիտական հուշարձանների մեջ իրենց ուրույն տեղն ունեն կիկլոպյան ամրոցները, որոնք կանգնած են խմբերով՝ տեղանքի առանձնահատկություններին համապատասխան։

Ամրոցների մի ուշագրավ խումբ գտնվում է Գավառագետի արգավանդ հովտում, որը ուրարտացիների ժամանակ Ուելիքուխի կամ Վելիկուխի (Uelikuḫi կամ Uelikuni) երկիրն էր իր նշանավոր կիկլոպյան ամրոցով, որ գտնվում էր այժմյան Կամո (Նոր Բայազետ) քաղաքի կենտրոնում բարձրացող սարահարթի արևմտյան մասում։ Ինքը սարահարթը բարձրանում է Գավառագետի միջին հոսանքում։

Ամրոցը տեղի բնակիչներին հայտնի է «Բերդի-գլուխ» անունով[1]։ Այն իր արևմտյան անմատչելի խիստ ժայռապատ վերջավորությամբ խրված է քաղաքի մեջ և նրա ընդհանուր մակարդակից բարձր է 40—50 մետր։ Բարձունքի մակերեսը գրեթե հարթ է, բացառությամբ նրա արևմտյան եզրի մոտ գտնվող՝ 5—6 մետր բարձրություն ունեցող բլրակի Ս. Ստեփանոս մատուռի շրջակայքում (տե՛ս նկ. 1)։

Բարձունքը ձգվելով արևմուտքից արևելք՝ աստիճանաբար լայնանում է և շարունակվելով գնում է շուրջ հինգ կիլոմետր ու վերջանում խիստ ժայռապատ զառիթափով, որտեղ երբեմն կանգնած է եղել մի այլ կիկլոպյան ամրոց։

Սարահարթի հյուսիսային լանջը քիչ ավելի թեքություն ունի, քան հարավայինը, որը ամբողջովին ծածկված է խոշոր ժայռաբեկորներով։ Դարերի ընթացքում ժայռերը բնական զանազան ուժերի ազդեցության տակ պոկվելով գլորվել են ցած և միմյանց վրա կուտակվելով, բարձունքի հարավային, արևմտյան և մասամբ էլ հյուսիս-արևմտյան լանջերը դարձրել անանցանելի։ Այդ լանջերի վրա գագաթին մոտ կան մի քանի բնական քարանձավներ, որոնցից երկուսը բավականին մեծ են և հավանորեն եղել են նախամարդու կացարաններ։ Բարձունքի արևմտյան մասի մակերեսը անընդմեջ ծածկված է ժայռաալեներով և գրեթե զուրկ է հողաշերտից։ Հողածածկ տարածությունը, դեռ վաղ ժամանակներից, ծառայում է որպես գերեզմանոց։

Ամրոցի երկարությունը արևմուտքից դեպի արևելք ավելի քան 400 մետր է. այն սկսվում է բարձունքի արևմտյան վերջավորության զառիթափից և վերջանում արևելյան մասում՝ չորս մետր լայնություն ունեցող պարսպով։ Ամրոցի

---

1 Բերդի-գլխի ամրոցով և Ուելիքուխի երկրով հետաքրքրվել և ուսումնասիրել են շատ հետախույզներ և հնագետներ. այդ թվում՝ Մ. Սմբատյանցը 1862—1895 թթ., Ե. Լալայանը 1906—1911 թթ., Թադ. Ավդալբեգյանը 1927 թ., Բ. Բ. Պիոտրովսկին Լ. Տ. Գյուզալյանի հետ միասին՝ 1930 թ., Ի. Ի. Մեշչանինովը 1931 թ., Ս. Բարխուդարյանը 1931 թ., Վ. Վ. Շլեհը 1951 թ. և ուրիշներ։



«Թերի գլուխ» ամրոցի հատակագիծը

Նկ. 1. Բերդի-գլուխ բարձունքի արևմտյան վերջավորություններ



Նկ. 2. Բերդի-գլխի հյուսիսային պարսպի մի հատված

միջին լայնություններ հյուսիսից հարավ 110 մետր է։ Այսպիսով, ողջ ամրոցը միջնաբերդի հետ զբաղեցնում է շուրջ հինգ հեկտար տարածություն, որից միջնաբերդը՝ մեկ ու կես հեկտար[2]։

2 Թադ. Ավդալբեգյանը 1927 թ. նույնպես չափագրել է Բերդի-գլխի ամրոցը, չափումները փոքր-ինչ տարբերվում են մեր բերածից։ Տե՛ս Թ ա դ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Նոր-Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, «Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», 1927, № 2, էջ 203—219։

Ամրոցի կենտրոնական և միջնաբերդի հարավ-արևմտյան մասերում պարզորոշ նշմարվում են կացարանների հետքեր, որոնց պատերի մեկ շարքը երևում է հողի երեսին։ Հավանաբար ամրոցի ամբողջ մակերեսը ծածկված է եղել բնակատեղիով, սակայն հետագայում քանդվել և դերեզմանատուն է դարձվել։ Կացարանների հետքեր երևում են նաև սարահարթի հարավային լանջերում։ Այստեղ որպես պատ օգտագործվել են վերևից գլորված խոշոր ժայռաբեկորները։

1927 թ. Թադ. Ավդալբեգյանի կողմից այստեղ հայտնաբերված ուրարտական արձանագրությունը զգալի պարզություն մտցրեց Վելիկուխի երկրի, Կամոյի Բերդի-գլխի ամրոցի պատմության հետ կապված հարցերի լուսաբանման մեջ[3]։ Այդ արձանագրությունը պատմում է.

«Խալդի Աստծո հզորությամբ Ռուսան, Սարդուրի որդին ասում է. Վելիկուխի երկրի թագավորին ես հաղթեցի, (իմ) ստրուկը ես (նրան) դարձրի, երկրից ես (նրան) հեռացրի (իմ) փոխարքա (մարզի կառավարիչ) այնտեղ ես դրեցի Խալդի աստծո դուռն (և) վեհապանծ (՞) ամրոց ես կառուցեցի, անունը (նրա համար) դրեցի «Խալդի աստծո քաղաք»։ (Ես նրան կառուցեցի) Բիաինիլի երկրի հզորության համար (և) հակառակորդի երկրին զսպելու (՞)։

Ռուսան՝ Սարդուրի որդին հզորագույն, որը Բիաինիլի երկիրն է կառավարում։

Արձանագրության դյուտից հետո պարզ դարձավ, որ Գավառագետի հովիտը նախաուրարտական շրջանում կոչվում էր Վելիկուխի երկիր, որ ուրարտական Ռուսա 1 (730—714/713) թագավորը նվաճեց Վելիկուխին, որ այնտեղ տաճար ու ամրոց կառուցեց Խալդի աստծո անունով, նոր կառավարիչ նշանակեց։

Վելիկուխիի մասին այլ տեղեկություններ ենք ստանում Ռուսայի հոր Սարդուրի II թագավորի արձանագրությունից (760—730 թթ. մ. թ. ա.)[5]։

«... Սարդուրին ասում է... միայն մեկ ջոկատով (՞) ռազմերթով ելա դեպի Վելիկուխի երկիրը, նվաճեցի ես Վելիկուխի երկիրը. 22 ամրացված միջնաբերդեր մարտում ես նվաճեցի, ամրոցներ քանդեցի, քաղաքներ հրկիզեցի, երկիրն ավերեցի, տղամարդկանց (և) կանանց ես քշեցի Բիաինիլի երկիրը։ Սարդուրին ասում է. իմ առաջ ներկայացավ Վելիկուխի երկրի թագավոր Նիդինին, ընկավ երեսնիվայր։ Ես նրան (իմ) ստրուկը դարձրի, խնայեցի ես նրան հարկ վճարելու պայմանով, Սարդուրի թագավորին հարկ վճարելու Սարդուրիի համար...»։ Այստեղից երևում է, որ Սարդուրին Գավառագետի հովտում և նրա շրջակայքում, որոնք մտել են Վելիկուխիի սահմանների մեջ, նվաճել ու ոչնչացրել է 22 կիկլոպյան ամրոցներ, հպատակեցրել է նրա թագավորին, որին, ըստ երևույթին, պատկանում էր Կամո քաղաքի կենտրոնական ամրոցը Բերդի-գլխում։

Այսպիսով, ուրարտական արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վելիկուխի երկրի ամրոցները, այդ թվում և Բերդի-գլխի կենտրոնական ամրոցը, կառուցված են եղել ուրարտացիներից առաջ, իսկ Խալդի քաղաքն ու «Խալդյան դռները» կառուցվել են ուրարտացիների կողմից

3 Թադ. Ավդալբեգյան, Նոր-Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, էջ 203—219։

4 Ի. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, Тбилиси, 1960, էջ 265։

5 Նույն տեղում, էջ 287։

Վելիկուխիի նախաուրարտական ամրոցի փլատակների վրա։ Այդ տեսակետը հաստատվում է 1960 թ. մեր կողմից կատարված հետախուզական պեղումների միջոցով։

Բերդի-գլխի Ս. Ստեփանոս մատուռից 15 մետր դեպի արևելք, 16 քառակուսի մետր տարածություն գրավող հրապարակի վրա, 40 սանտիմետր հողաշերտ հեռացնելուց հետո բացվեց երկշար պատի երեսը, մեկ ու կես մետր լայնությամբ. նա ձգվում է հյուսիսից հարավ չորս մետր և ապա դառնում է դեպի արևելք երեք մետր երկարությամբ։ Պարսպի հիմքը դրված է բնական ապառաժների վրա, շարվածքը առանց շաղախի, քարերը խոշոր և անմշակ։ Պարսպի վրա գտնվեցին օբսիդիանի մանր բեկորներ։ Մեկ մետր խորությունից հայտնաբերվեց մակույկաձև աղորիքի տրորող քարի մի մաշված բեկոր, որը լավ կոկված էր։ Գտնվեցին նաև կավամանների բեկորներ։

Մեր կարծիքով դա այն կիկլոպյան ամրոցի մնացորդներից է, որ գոյություն է ունեցել մինչև ուրարտացիների երևալն այդ կողմերում։

Օրեք հանգամանք հաստատում են մեր կարծիքը.

1. Նախաուրարտական ամրոցի պարսպապատի կամ առանձին շինության հայտնաբերված մասը շինարարական տեխնիկայի տեսակետից չի համապատասխանում ուրարտական հայտնի կառույցներին ոչ Բերդի-գլուխ ամրոցում, ոչ էլ այլ վայրերում։

2. Պեղումների երկրորդ տեղամասում հայտնաբերված շինարարական մնացորդները, որոնք, ըստ երևույթին, ուրարտական ժամանակաշրջանի վկաներն են, ներկայացնում են հետևյալ պատկերը. այստեղ մենք հայտնաբերեցինք միջնաբերդի հյուսիսային պարսպի հատվածը, որի երկարությունը 10,5 մետր է, պարսպի լայնությունը 2,3 մետր, պարսպից 0,65 մետր լայնությամբ դուրս է բերված 2,4 մետր երկարությամբ որմահեցի (կոնտրֆորսի) նման մի շարվածք։ Միջնաբերդի պարիսպը գտնվում է զառիթափի անմիջապես եզրին և այդ հենապատը փլման վտանգից ապահով լինելու համար է կառուցվել։ Այդպիսի հենապատեր նկատվում են նաև պարսպի այլ մասերում, որոնք դեռևս բացված չեն (տե՛ս նկ. 2)։

Բացված պարսպի բարձրությունը գետնի մակերեսից մինչև հիմքի առաջին շարը 2,1 մետր է, քարերը ջարդված են, անմշակ, առավել հարթ երեսով դարձված դրսի կողմը։ Պատը երկշար է, շարերի մեջ լցված են մանր քարեր կամ խիճ։ Սպիտակ հողից շաղախը օգտագործվել է որպես քարերը միացնող զանգված[6]։

Պարսպի բացված հատվածից հետքերը, հիմնականում գնալով դեպի արևելք, հավանորեն անցնում են գլխավոր մուտքը և շարունակվում որպես ընդհանուր պարիսպ՝ բերդի հյուսիսային ամբողջ երկարությամբ։ Պարսպի հետքերը, ավերածության հետևանքով, տեղ-տեղ կորչում են։

Ինչպես տեսնում ենք, այս պարիսպն ամենևին նման չէ վերը նկարագրված պարսպին։ Սրանք, մեր կարծիքով, տարբեր ժամանակների, մշակութային ու ճարտարապետական տարբեր մակարդակների աշխատանքներ են, որով և պարզվում է այն, թե ինչպես Ռուսան խորտակել է Վելիկուխիի թագավորի քաղաքը և տեղը կառուցել Նորը... «ի փառս բիահնացոց, ի սարսափ

6 Պարսպի ներսի երեսը չբացեցինք, որովհետև նրան անմիջապես կից կան գերեզմաններ, ինչպես նաև որպեսզի պարիսպը պահպանվի փլուզումից։

Նկ. 3. Նյութեր՝ գտնված «Բերդի-գլուխ» ամրոցի պեղումներից, Պիոներ-պալատի հիմքից և քարանձավային դամբարանից։



Նկ. 4. Կավե գեմմայի բեկոր։

երկրին թշնամու», ինչպես ասված է Բերդի-գլխում գտնված արձանագրության մեջ։

Պարսպի բացման ընթացքում տարբեր խորությունների վրա հայտնաբերվեցին խեցեղենի բազմաթիվ բեկորներ, 1,6 մետր խորությունից դուրս եկավ երկաթյա մանգաղի շեղբի վերջավորություն և երկաթյա դամ-մեխի գլուխ։ Երկուսն էլ խիստ քայքայված են ժանգից։ Նույն տեղից գտնվեց կավից պատրաստված կնիքի կամ դեմմայի մի բեկոր։ Վերջինս բազմանկյունաձև է և ամեն մի շրջանակային կողի վրա դրոշմված է (մի շրջանակինը լրիվ երևում է, երկրորդի մի մասը վնասված է) ձիու սխեմատիկ պատկեր, որն ունի երկու գլուխ, պարզ նկատելի բաշերով, գլուխների վերևում երևում են կիսալուսնի նման այլ նկարներ։ Տափակ երեսի վրա գծիկներով նկարված է մարդու գծանկարը, կողքին երեք շարքով 6 կետեր, որոնք մարդու գծանկարի հետ կազմում են հիերոգլիֆ նշանների մի խումբ։ Տրամագիծը 2,5 սանտիմետր է։ Նկարագրված կնիքի բեկորը նմանվում է այն կնիքին, որը գտնվել է Կարմիր-բլուրում[7] (տե՛ս նկ. 4)։

Այս երկու կնիքներն ունեն որոշ նմանություն, այստեղից կարելի է ենթադրել, որ այն (Բերդի-գլխինը) կամ ուրարտական է, Ռուսայի՝ Սարդուրիի որդու ժամանակի, կամ վաղ հայկական կնիք է։ Այդ տիպի կնիքներ ու դեմմաներ հայտնաբերվել են նաև Վրաստանում[8]։

Բերդի-գլխի ամրոցի հարավ-արևելյան անկյունը պեղելիս կամենում էինք ստուգել ամրոցի այս անկյունում աշտարակի առկայությունը, որի հետքերը ամենևին չէին երևում. պարզվեց, որ այստեղ եղել է մի հսկա աշտարակ, որից դիտվել է Գավառագետի ողջ հովիտը, Մրութի ձորի և Արծվաքարի երկու ամրոցները։ Բացված աշտարակի հիմքը ուներ 4×4 մետր չափի հրապարակ։ Աշտարակի հիմքը կառուցվածքով նման է ամրոցի մյուս պարիսպներին։ Նրա հիմքում, ինչպես նաև արևելյան պարսպի հիմքերում, տարբեր ժամանակներում թաղումներ են կատարվել։

Բերդի-գլխի ամրոցը, ինչպես վերևում տեսանք, ունեցել է երկու շինարարական շրջան՝ նախաուրարտական և ուրարտական։ Ուրարտական ամրոցն արտաքինից երևացել է որպես մի ամբողջություն, չորս կողմից շրջապատված ամուր պարիսպներով, որոնց վրա եղել են բարձր աշտարակներ։ Ամրոցը ներսում միջնապարսպով բաժանված է եղել երկու մասի՝ արևմտյան և արևելյան։

Ամրոցի արևմտյան մասը քիչ ավելի բարձրադիր է և ավելի քիչ տարածություն է գրավել։ Իր հարավային, արևմտյան և մասամբ հյուսիս-արևմտյան կողմերից ավելի անառիկ է, որտեղ հավանորեն եղել է միջնաբերդը։ Արևելյան մասը, որն ավելի ընդարձակ է եղել, հանդիսացել է պարսպապատված բնակավայրը։

3. Շատ հնարավոր է, որ Վելիկուխիի նախաուրարտական «քաղաքի» հետ են կապված եղել քարանձավային այն թաղումները, որոնցից մեկը պատահականորեն բացվեց քաղաքացի Աղբյանի հողամասում, Կամոյի սարալանջի հարավային թևի վրա, «խաչերի» կիկլոպյան ամրոցից դեպի արևելք 400—500 մետր հեռավորության վրա։

---

[7] Б. Б. Пиотровский, Кармир-блур, II вып., стр. 45—53, рис. 16, 21, 23.

[8] Лордкипанидзе, Геммы Государственного музея Грузии, часть I, 1954, табл. V, рис. 64 (на груз. языке).

Քարանձավը ներկայացնում է մի կոլեկտիվ դամբարան, որտեղ թաղվել են չորս ննջեցյալներ։

Նրա երկարությունը երեք մետր է, լայնությունը՝ երկու, բարձրությունը՝ մեկ մետր։ Ձեռքի աշխատանքի ոչ մի հետք չի երևում, միայն մուտքի առաջ շարված է միջին մեծության քարով մի շարք, առանց որևէ միացնող շաղախի։

Կմախքները ընկած էին հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք, վատ պահպանված, հողաշերտը 30—40 սանտիմետր, որը ժամանակի ընթացքում նստել է և գանգերի ու ամանների մի մասը դուրս էր եկել հողի տակից։ Հողը, որ լցված է եղել դիակների վրա, բերվել է այլ տեղից և խիստ տարբերվում է տեղի կարմիր ավազահողից։

Դամբարանից հայտնաբերվել են մի քանի կավամաններ (տե՛ս նկ. 3, № 7, 8, 10) և թվագրվում են, ամենայն հավանականությամբ, X—IX դարերով (մ. թ. ա.)։

Այսպիսով, հնագիտական ուսումնասիրության նախնական տվյալները գալիս են հաստատելու ակադ. Ի. Ի. Մեշչանինովի այն կարծիքը, թե արձանագրության ձևը «...խոսում է ոչ թե նոր քաղաքի կառուցման մասին ամայի մի վայրում, այլ հին ամրոցի (Բերդի-գլխի—Գ. Մ.) վերակառուցման, նրա հարմարեցման մասին որպես ուրարտական փոխարքայի աթոռանիստ ամրոց-քաղաքի իր միջնաբերդով ու կայազորով»։ Միայն ընդունելի չէ Ի. Ի. Մեշչանինովի այն կարծիքը, թե Բերդի-գլուխ ամրոցն ունի միայն մեկ (0,65 մետր խորությամբ) մշակութային շերտ, թե այն Ուրարտուի անկումից հետո դադարում է գոյություն ունենալ որպես բնակավայր և ամրոց։

Քիչ հավանական է նաև Կ. Վ. Շլեևի պնդումն այն մասին, թե Բերդի-գլխի ամրոցում կյանք չի եղել ոչ նախաուրարտական և ոչ էլ ետուրարտական շրջաններում[10]։

Բնական է, որ ուրարտական թագավորության անկումից հետո Բերդի-գլխի ամրոցը և «Թալդի քաղաքը» պետք է կորցներ իր նշանակությունը որպես Վանի թագավորության հենարաններից մեկը, բայց այդ բնավ էլ չի նշանակում, որ կյանքն այնտեղ դադարել է ընդհանրապես և բնակավայրը իսպառ վերացել։

Պեղումներով երևան բերած նյութերը ցույց են տալիս, որ կյանքն այնտեղ չի դադարել նաև ուրարտացիներից հետո, այլ շարունակվել է մինչև մեր թվականության առաջին դարերը։

Ամրոցում հայտնաբերված անտիկ շրջանի նյութերը առայժմ սակավաթիվ են, բայց խոսուն։

Ամրոցի ուրարտական աշտարակի հիմքը բացելիս, նրա արտաքին (արևվելյան) շարվածքում հայտնաբերվեց մի յուրահատուկ քարարկղային դամբարան. պարսպից հանելով մի մեծ քար, փոխարենը գրել են դիակը։ Դամբարանում աճյունից մնացել էր միայն ներքին ծնոտը։ Ծնոտի մոտ գտնվեց

---

[9] И. И. Мещанинов, Циклопические сооружения Закавказья. «Известия», ГАИМК, т. XIII, вып. 4—7. 1932, էջ 10։

[10] В. В. Шлеев, Автореферат к диссертации «Урартские крепости и проблема их изучения», 1954.

ապակյա քիչ երկարավուն, անկանթ մի սրվակ։ Սրվակը նման է խաղողի ողկույզի և հիշեցնում է Գառնիում գտնված ապակյա սրվակը, այն տարբերությամբ, որ նա ավելի կլոր ձև ունի[11]։ Այսպիսի զուգահեռի գոյությունը հնարավորություն է տալիս մեզ ենթադրելու, որ նրանք ձուլված են մի տեղում և գուցե միևնույն արհեստանոցում։ Նույն դամբարանից հայտնաբերվեցին ապակուց, կավից ու պաստայից ուլունքներ, որոնք նույնպես նման են Գառնիում գտնված ուլունքներին (տե՛ս նկ. 3, № № 2, 3, 11)։

Նույն ժամանակաշրջանի դամբարան բացվեց 1960 թ. Կամո քաղաքի կենտրոնում, շինարարական աշխատանքների ժամանակ, պիոներական պալատի հիմքը փորելիս։ Այդ վայրի դամբարանների գոյության մասին հայտնի էր դեռ առաջ[12], այդտեղից տեղացիները հաճախ գտել են զանազան կավանոթներ, բրոնզե իրեր և այլ առարկաներ։

Մեր կողմից պեղված այդ դամբարաններից մեկը քարարկղային էր։ Դամբարանի վրա դրված էր 2×1,5 մետր չափի մի սալ քար, պատերը շարված էին համեմատաբար փոքր քարերից, նրանց բարձրությունը չի անցնում 70—80 սանտիմետրից։ Գլխի և ոտքերի մոտ դրված են մեկական մեծ սալ քարեր։ Կմախքը պառկած էր մեջքի վրա, հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ուղղությամբ։ Կրծքի վրա դրված էր մի ապակյա գնդաձև սրվակ, որի մակերեսի վրա արված են երկու շարքով չորսական ելուստներ, կարծես մատերով կսմթած լինի։ Սրվակի վիզը երկարավուն է, բերանը նեղ, շրթնամասը լայնացված է ու դարձած դեպի դուրս։

Հար և նման սրվակ գտնվել է հին Վաղարշապատը պեղումների միջոցին, այն վերագրվել է հռոմեացիներին։ Վաղարշապատում գտնված սրվակը պահվում է ՀՊԹ, № 730, թվագրվում է մեր թվականության I—III դդ.։

Կմախքի ոտքերի մոտ կանգնած վիճակում կար մի գավ, տափակ հատակով, մեկ կանթով (ջարդված)։ Գավը վզի վրա ունի ուռուցիկ օղակ. ձեռքի աշխատանք է։ Այս գավը համարյա կրկնում է Գառնիի դամբարանից դուրս եկած գավը, որը նույնպես գտնվում է ՀՊԹ[13]։ Կմախքի աջ ձեռքի ճկույթը կրում էր բրոնզե մի մատանի։

Նույն տեղում, բացված մի այլ դամբարանից հայտնաբերվել են (մինչև մեր գալը) հինգ փոքրիկ կավամաններ, որոնցից երկուսը առավել ուշագրավ են։ Նրանցից մեկը գրգի վրա պատրաստած մի կանթանի անոթ է, կանթի վերին մասում կա վերադիր զարդ, կարմիր գույնի է, հատակը նեղ։ Նման կավանոթ նույնպես հայտնաբերվել է Գառնիում։ Մյուս կավանոթը ունի սև գույն, մեկ կանթով, ձեռքով շինված կոպիտ աշխատանք է։ Ամանը թաղելու միջոցին, հավանորեն, ջարդված է եղել, քանի որ ամանի կողերի վրա երկու տեղում երևում են փոքրիկ անցքեր, որոնք ըստ երևույթին գամերի անցքերն են, գամերը չկան։

Փորված հիմքի հատակում, մայր հողի վրա, մեկ ու կես մետր խորության վրա գտնվեցին կավից պատրաստած յոթ ծխամորճերի գլուխներ, մեծ վարպետությամբ շինված և զարդանկարված, բոլորն էլ լավ փայլեցված են. բաց կարմիր գույնի։ Ծխամորճերը ջարդված են և երևում է, որ գործա-

11 ՀՊԹ, № 2098—1։
12 И. И. Мещанинов, հշվ. աշխ., էջ 17, ծան. 1։
13 ՀՊԹ գտնված իրերի համարներն են 1) 1966—145, 2) 1965—22։

ծության մեջ չեն եղել, բացի մեկից, որը ավելի մուգ գույն ունի և շատ նուրբ գծերով զարդանկար։ Գործածված ծխամորճի մեջ և խողովակում կան ծխի հետքեր։ Նման իրեր գտնվել են նաև Գառնիում ու Դվինում (տե՛ս նկ. 3, № № 1, 4, 5, 6)։

Մեր կարծիքով, անտիկ շրջանի վերը նկարագրած դամբարանների հետ է կապվում ամրոցի տերիտորիայի վրա այժմ էլ երևացող կացարանների մի մասը։ Այդպիսի կացարանի մնացորդներ մենք պեղեցինք միջնաբերդի արևմտյան մասում, որտեղ բացվեց երկշար մի պատ, կանոնավոր շարված, բարերի արանքները սպիտակ հողի շաղախով լցված։ Պատը շարված է կիսամշակ բազալտ քարից, քարերը լավ հարմարեցված են մեկը մյուսի հետ, հարթ կողերը դարձված սենյակի ներսը։ Պատի լայնությունը 1,2 մետր է, բարձրությունը մինչև հիմքի առաջին քարը՝ 1,4 մետր, երկարությունը՝ 3,5 մետր։ Պատը ձգվում է հարավից դեպի հյուսիս, ապա ուղիղ անկյան տակ դառնում է դեպի արևելք երկու մետր երկարությամբ, որտեղ հանդիպելով գերեզմանի, այլևս չի շարունակվում՝ ավերված է։ Պեղման աշխատանքը դադարեցվեց։ Սենյակին որպես հարավային պատ ծառայում էր միջնաբերդի հարավային պարիսպը։ Այսպիսով ոչ լրիվ պեղած սենյակի մեծությունը կլիներ 16—20 քառակուսի մետր։

Այստեղից երևան եկան սև գույնի խեցեղենի բեկորներ, առանց փայլի ու զարդերի, վարազի երկու ժանիք և եղջերուի եղջյուրներ։

Սենյակի արևմտյան պատի տակ բացվեց թոնիր հիշեցնող մի խոր փոս, սակայն առանց կավե կողերի, փայտի և աթարի մոխրացած մնացորդներով։

Նույն սենյակում 0,8 մետր խորությունից հայտնաբերվեց ապակյա անոթի կանթի մի բեկոր, որի վրա դրված է վերևից ներքև իջնող և աստիճանաբար նեղացող մի սլաքանման վերադիր զարդ։ Կարծում ենք, որ այս կանթը պատկանում է պիոներ պալատի հիմքում գտնված և Բերդի-գլխի դամբարանից դուրս եկած ապակյա սրվակների ժամանակաշրջանին (մ. թ. I—III դդ.)։

Կամոյի ամրոցի նախնական ուսումնասիրության ընթացքում մենք, բնականորեն, անդրադարձանք նաև մի շարք այլ հարցերի, որոնք անքակտելիորեն կապված են եղել ամրոցաշինության հետ։

Մեր առաջին խնդիրներից մեկն էր գտնել ստորերկրյա այն ճանապարհը, որով Բերդի-գլուխը կապվել է Գավառագետի հետ, որտեղից ամրոցի պաշարման ժամանակ պաշարվածները գետնուղով ջուր են տարել։

Մեզ ծանոթ կիկլոպյան ամրոցները համարյա ջրազուրկ են։ Չեն նկատվում ինչպես տեղում եղած աղբյուրների հետքեր, նույնպես և ուրիշ տեղից բերված ջրի առուներ, որոնք կավերվեին պաշարման ժամանակ, պաշարողների կողմից։ Ճիշտ է, որ որոշ ամրոցներ (Հացառատի, Խաչերի) գտնվում են հորդառատ աղբյուրների անմիջապես գլխին, սակայն նրանք ամրոցի պարիսպներից դուրս են։

Ինչ վերաբերում է Բերդի-գլխի ջրամատակարարմանը, ենթադրում ենք, որ Բերդի-գլխից գետնուղի է բացվել դեպի Գավառագետը, որտեղից և ջուրը ամրոց են տարել։

Բերդի-գլխից դեպի Գավառագետը ստորերկրյա ճանապարհ հավանորեն կառուցվել է ուրարտացիների տիրապետության ժամանակ, երբ նրանց հաջողվել է սարկացնել Վելիկուխիի ժողովրդին ու նրանց ձեռքով էլ վերակա-

ուցել ամրոցը. նրանց միջոցով է շինվել և ամրոցի գետնուղին։ Այդ մասին դիտողություններ ունեն նաև Բերդի-գլխի։ նախորդ ուսումնասիրողները[14]։

1959 թ. Կամո քաղաքում շինարարական հողային աշխատանքներ կատարելու ժամանակ Բերդի-գլխին զուգահեռ գնացող Նալբանդյան փողոցում երկու տեղից բացվում են գետնուղու պատերն ու առաստաղը, որոնք շարված են եղել մեծ սալաքարերով. այդ ստորերկրյա ճանապարհով մարդը կարող էր կռացած շարժվել։ Այդտեղ գտնվել են 8—10 սանտիմետր տրամագիծ ունեցող թրծած կավե խողովակներ։

Մեր հետազոտության ժամանակ հայտնաբերվեց գետափ դուրս եկող գետնուղու ելքը։ Այն գտնվում է Գավառագետի ափից (չհաշված ներկայիս արհեստական ջրանցքը) մոտ 100 մետր հեռավորության վրա, որտեղից այլևս հնարավոր չէր ստորերկրյա ճանապարհով մոտենալ գետին, ուստի հասնելով այդ կետին, որը մի հսկա քարաժայռի զանգված է, անցքը ելքի մոտ լայնացվել է և ստացվել է մի բավականին ընդարձակ արհեստական քարանձավ, որտեղ կարող են տեղավորվել 10—12 մարդ։

Քարանձավի կենտրոնում կա մի ջրհոր, որի եզրերը 0,5 մետր խորությամբ սրբատաշ տուֆ քարերով կանոնավոր շարված են։ Ջուրը, որ գտնվում է հորի բերանից մեկուկես մետր խորության վրա, մաքուր է և քաղցրահամ, նման այդ շրջապատում եղած աղբյուրների ջրերին։ Հիշված քարանձավը, որը և Բերդի-գլխի գետնուղու ելքն է, գտնվում է քաղաքացի Մերթառչյանի թոնրատան տակը և օգտագործվում է իբրև պահեստ-փայտանոց։ Ջրհորի բերանը ծածկված է կլոր սալաքարով։

Այդտեղից ստորերկրյա ճանապարհը բարձրանում է դեպի Բերդի-գլուխը։ Ցանտերը այդ անցքի առաջ պատ է շարել և անցքով առաջ գնալ հնարավոր չեղավ։ Այդ աշխատանքը թողնվեց մի այլ ավելի հարմար ժամանակի։

Ստորերկրյա ճանապարհի մուտքը փորձեցինք գտնել վերևից, այսինքն՝ Բերդի-գլխից, պեղման միջոցով, մեր փորձը հաջողությամբ չպսակվեց։

Թվում է, որ Բերդի-գլուխը հետազոտողներից և ոչ մեկն էլ չի տեսել նրա մուտքը դեպի Գավառագետ տանող գետնուղում։ Եթե Մ. Սմբատյանը տեղյակ լիներ մուտքի տեղին Բերդի-գլխում, անշուշտ ավելի մանրամասնորեն կնկարագրեր այն և ցույց կտար նրա ստույգ տեղը։ Սույնը կարելի է ասել Թադ. Ավդալբեգյանի մասին։ Ճիշտ է, նա ցույց է տալիս երկու կետ, որտեղից իբր բացվում են գետնուղու մուտքերը դեպի Գավառագետ[15]։ Սակայն մեր հետախուզական պեղումները նշված կետերում հայտնաբերեցին առաջինում՝ վաղ միջնադարյան բնակարանի պատեր, բազմաթիվ խեցեղենի բեկորներ ու ոսկորներ, իսկ երկրորդում՝ վերը արդեն նկարագրված նախաուրարտական կացարանի պատի կամ պարսպի մի մաս։

Կարծում ենք, որ ավելի մանրակրկիտ ու նախապատրաստված հետախուզությունը հնարավորություն կտա գտնելու գետնուղին, որով կլուծվեն բազմաթիվ հարցեր կապված Բերդի-գլխի հետ։

Հաջորդ, նույնպես շատ կարևոր հարցերը վերաբերում են ամրոցի դիրքին, ռազմական կարևորություն ունեցող կապերին, կոմունիկացիաներին և այլն։

---

14 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 59։

15 Թադ. Ավդալբեգյան. Նշվ. աշխ., էջ 203—219։

Շլեևը տեխնիկական սխալի հետևանքով պնդում է, որ «Ամրոցի արևելյան մասում, որտեղ սարի (Բերդի-գլխի—Գ. Մ.) լանջերը նշանակալի թեքություն ունեն, գտնվում է միջնաբերդը, որն զբաղեցնում է ամբողջ բերդի մակերեսի 1/3 մասը, բաժանված լինելով բնակատեղիից պարսպով»։ Մուտքը դեպի ամրոց, ըստ նրա ենթադրության, եղել է հարավային կողմից[16]։

Ձառիթափը, որտեղ ենթադրվում է միջնաբերդի ավերակների տեղը, գրտնվում է սարահարթի արևմտյան վերջավորության վրա։ Արևելյան վերջավորությունը նույնպես վերջանում է ձառիթափով, որի վրա գտնվում է «Ջաղացի-գարի» կիկլոպյան ամրոցը։

Բ. Բ. Պիոտրովսկին և Լ. Տ. Գյուզալյանը գտնում են, որ Արծվաքարի (Ղշլաղի) մոտ «Ժամի-գարի» և «Ջաղացի-գարի», ինչպես նաև «Մրոթբիձորի» ամրոցները իրենցից ներկայացրել են գլխավոր ամրոցի՝ Բերդի-գլխի մոտակա մատույցների պահակակետերը իրենց փոքրիկ կայազորներով[17], արևելքից և հարավից։

Միանգամայն համաձայն լինելով այս մտքի հետ, ավելացնենք, որ արևմուտքից և հյուսիսից այդպիսի ծառայություն տանելը հավանորեն դրվել է Հացառատի (=Առնեղ), Փաշաքյանդի (Բերդի-գլուխը չշփոթել Կամոյի Բերդի-գլխի հետ), Կամո քաղաքի արևմտյան ծայրամասի «Խաչեր» կոչված վայրում եղած ամրոցների և «Ապատի» ամրոցի վրա, որը գտնվում է Կամո քաղաքից 5 կիլոմետր դեպի հյուսիս։ Վ. Վ. Շլեևը գրում է, որ Ղշլաղի երկու «ամրոցները դուրս են բերվել առաջ, գլխավոր ամրոցից՝ Բերդի-գլխից, որոնք ծառայել են որպես գետի պաշտպան ամրոցներ և ապահովել են գլխավոր ամրոցի ջրամատակարարումը»[18]։

Գավառագետը հոսում է արևմուտքից դեպի արևելք, իսկ Կամո քաղաքը Արծվաքարից դեպի արևմուտք է գտնվում. ուստի ավելի հավանական կլիներ կարծել, որ այդպիսի ծառայություն դրված է եղել Հացառատ գյուղի և Խաչերի ամրոցների վրա, որոնք գտնվում են Գավառագետի ակունքների մոտ։

Թե որտեղ է եղել մուտքը դեպի միջնաբերդ կամ ամրոցը, դա կճշտվի միայն հետագա պեղումների և ուսումնասիրությունների ընթացքում։ Առայժմ մենք այն կարծիքին ենք, որ ամրոցի մուտքը գտնվելիս է եղել սարահարթի հյուսիսային լանջի կողմից և այն միջնապարսպի մոտ, որը միջնաբերդը զատում է ամրոցից, ուր դեռևս մնում են աշտարակի հիմքի քարերը։ Ըստ արձանագրության, շինարարական քարը գտնվելիս է եղել սկզբում այդ ենթադրվող աշտարակի շրջակայքում, որտեղից տեղափոխել են ու դրել գերեզմանի վրա որպես տապանաքար[19]. այդ տարածությունը 30 մետրից չի անցնում։

Բերդի-գլուխը իրեն անմիջապես շրջապատող ամրոցների հետ կապվում էր ցերեկը տեսողական, գիշերը՝ խարույկների ազդանշանների միջոցով։

---

16 В. В. Шлеев, Урартские крепости Закавказья и проблема их изучения. Диссертация на соискание канд. ист. наук, էջ 232.

17 Տե՛ս Б. Б. Пиотровский, Л. Г. Гюзалян, Крепости Армении доурартского и урартского времени. Проблема истории мат. культуры, № 5—6, 1938.

18 В. В. Шлеев, Урартские крепости Закавказья и проблема их изучения. Диссерт. на соиск. канд. ист. наук, рукопись, 1954.

19 Թաղ. Ավդալբեկյան, նշվ. աշխ.։

Սակայն Բերդի-գլխի հետ կենդանի կապ պահելու համար պետք է որ անցնեին Գավառագետը (խոսքը Գավառագետի աջափնյա ամրոցների ու բնակատեղերի մասին է)։ Գավառագետն անցնելու համար անհրաժեշտ էր ունենալ ձի և այլ փոխադրամիջոցներ։ Հետիոտն անցնելու և դումակի համար պետք էր կամուրջ, քանի որ այդ լեռնային գետը, չնայած եղել է ջրառատ, սակայն նավարկության համար պիտանի չէ իր քարքարոտ հունի և գահավեժ լինելու պատճառով։

Բերդի-գլխի հարավ-արևելյան անկյան ուղղությամբ, գետի վրա կա սալաքարերից կառուցված կամուրջ։ Կամուրջը համարյա պահպանվել է մինչ այսօր, տեղացիները այն անվանում են «Քարե կարմնջներ»։

Կամուրջն ունեցել է 6—8 թռիչք, ծածկված խոշոր սալաքարերով։ Վերջիններիս երկարությունը հասնում է 3,5 մետրի, կան ավելի երկարները, լայնությունը մեկ մետրից ավելի է, սալաքարի հաստությունը 0,4—0,6 մետր է, դրանք զույգերով դրված են խոշոր ու անտաշ քարերից շարված հենասյան վրա։ Այսպիսով, երկու սալաքարերի միացումից ստացվել է 2,5 մետր լայնություն ունեցող կամուրջ, որի վրայով մեկ ուղղությամբ կարող էին շարժվել ժամանակի սայլերն ու մարտակառքերը, որոնց լայնությունը եղել է 1,70 մետր[20]։ Սալաքարերն իրենց մի անկյունում, հաճախ երկու անկյունում, նույն ուղղությամբ ունեն 5—7 սանտիմետր տրամագծով անցքեր, որոնց ամրացվել են փոկերը եղների կամ գոմեշների օգնությամբ վեմերը քարահանքից տեղափոխելու համար։ Սալաքարերի անցքերը բոլորը դարձված են դեպի հյուսիս, որը ցույց է տալիս, որ բոլոր կամրջաքարերը բերված են գետի հարավային կողմում եղած բարձունքից։

Գետի հարավային ափի բարձունքի լանջում, մի զոդավոր ձորակում, որն ընկած է ուղիղ քարե կամրջի դիմաց, երևում է մի ճանապարհի հետք, 3—4 մետր լայնությամբ։ Այն ուղղված է դեպի Մրոթբի-ձորի կիկլոպյան ամրոցը։

«Բարեկարգված ճանապարհներ կամուրջներով,—ասում է Բ. Բ. Պիոտրովսկին,—փայտից կամ զուցե քարից, գետերի վրա, որոնք գտնվում էին Ուրարտուում, այնքան էլ շատ չեն և հաճախ ճանապարհորդները, ինչպես Ասիայում, գետն անցնում էին տիկերի միջոցով լողալով[21]։

Կամոյում եղած՝ Գավառագետի վրայի քարե կամուրջը զուցե այն հազվագյուտ կառույցներից է, որոնք եղել են Ուրարտուում։ Այդ կամուրջն ու ճանապարհի հետքը ցույց են տալիս, որ թերևս Բերդի-գլխից դեպի հարավ անցել են ուրարտական սուրհանդակները, դումակն ու բանակը։

Ինչպես հայտնի է, քարի մշակությունը Վանի թագավորությունում շատ զարգացած էր։ Վանի քարաժայռում մնացած բազմաթիվ աստիճանների, հրապարակների, բնակարանների[22] տիպի կառուցվածքներ կարելի է դիտել ամենուրեք Ուրարտուի սահմաններում։ Քարագործության լավագույն նմուշ պետք է համարել Բերդի-գլխի ուրարտական ամրոցը և նրանից դեպի Գավառագետ իջնող ներքնուղին։ Կարելի է ենթադրել, որ վերը նկարագրված քարե կամուրջը նույնպես ուրարտացիների աշխատանքն է։

---

20 Տե՛ս С. А. Есаян, Из истории колесного транспорта древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 143։

21 Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 157։

22 Նույն տեղում, էջ 127։

Կամրջի կառուցման հարցում կա նաև մի ուրիշ կարծիք, ըստ որի կամրջի շինարարությունը թվագրում է մեր թվականության IX դարի կեսերով կամ 1374 թվականով[23]. Մեր կարծիքով այդ ժամանակ, թերևս, կամուրջը վերակառուցվել է։

* * *

Չնայած հետախուզական աշխատանքների նախնական բնույթին և նյութերի սակավությանն ու կցկտուր լինելուն, Վելիկուխի կենտրոնական ամրոցի և քաղաքի ուսումնասիրությունը զգալի հնագիտական տվյալներ ընձեռեց, որոնց հիման վրա մենք այժմ կարող ենք պնդել, որ Վելիկուխին նշանավոր երկիր է եղել իր բնակավայր-ամրոցներով ոչ միայն ուրարտացիների տիրապետության շրջանում, այլև նրանից առաջ՝ երկրորդ հազարամյակի վերջերից սկսած։

Վելիկուխին չի կորցրել իր նշանակությունը նաև վաղ հայկական ժամանակաշրջանում, համենայն դեպս մինչև մեր թվականության առաջին դարերը։

ЦЕНТРАЛЬНАЯ ЦИКЛОПИЧЕСКАЯ КРЕПОСТЬ СТРАНЫ УЕЛИКУХИ

Г. А. МИКАЕЛЯН

(Резюме)

Крепость «Берди-глух» в древности занимала определенное место в системе крепостей на берегах озера Севан и сыграла особую роль в жизни долины р. Гаварагет.

До захвата урартами этот район назывался, как это видно из клинообразной надписи, найденной в «Берди-глухе», страной Уеликухи или Великуни (Uelikuhi, Uelikuni), по всей вероятности с центром «Берди-глух», находившейся на возвышенности у г. Камо (Нор-Баязет).

О наличии жизни в долине р. Гаварагет доурартского периода свидетельствует циклопическая стена, открытая на «Берди-глухе», и керамика, найденная в могиле, которая находилась в гроте южного склона возвышенности западной окраины г. Камо, где было похоронено несколько человек (X—IX вв. до н. э.).

Урартский царь Руса, сын Сардури (730—714 гг. до н. э.), захватив и ограбив страну Великухи, разрушил крепость, а на этом месте построил новую, назвав ее «Городом бога Халди». Возможно, что им же были построены подземный ход от крепости до р. Гаварагет и мост из крупных плоских камней через реку.

После падения урартского владычества в бассейне озера Севан жизнь в районе долины реки Гаварагет не прекращается, хотя и быть может «Город бога Халди» перестает быть господствующим центром. О дальнейшей жизни здесь говорят найденные материалы при разведывательных раскопках на «Берди-глухе» (глиняная гемма, фрагменты керамики, стеклянные бусы и сосуд). Аналогичная керамика и стеклянный сосуд были найдены в центре г. Камо.

23 Տե՛ս Թ ա դ. Ա վ դ ա լ բ է գ յ ա ն, Երկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1927, էջ 6—8։